

## ՄԻ ԱՆԴՐԱԴԱՐՁ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒԻ ԴԱՍԱՒԱՆԴՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ «ԲԱԶՄԱՎԵՊ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆԻ ԷԶԵՐՈՒՄ

«Բազմավեպ» հանդէսի 1898 թուլիս ամսուայ համարում երիտասարդ գիտնական Հրաչեայ Աճառեանն անդրադառնում է ֆրանսիայում եւ Գերմանիայում գործող այն կրթօջախներին, որոնցում ի թիւս այլ լեզուների դասաւանդուում էր նաեւ հայերէն, եւ դա կարելի էր համարել գովելի իրողութիւն, եթէ ի յայտ չգային մի շարք անընդունելի հանդամանքներ, որոնց լուսաբանմանն էլ նուիրուած է այս յօդուածը:

Ինչպէս երեւում է շարադրանքից, «Բազմավեպ» հանդէսի այս յօդուածին նախորդել էր լրատուութիւն այն մասին, որ ֆրանսիայում եւ Գերմանիայում կան կրթօջախներ, ուր հայերէն են դասաւանդում: Այդ առիթով երիտասարդ լեզուաբան Հ. Աճառեանը ներկայացնում է իր տեսակէտը նմանատիպ կրթօջախներում ուսուցման գործնական նպատակների եւ արդիւնաւէտութեան մասին: Անդրադառնալով այն իրողութեանը, որ հայերիս համար մեր լեզուն օտարներին ճանաչելի դարձնելու ամէն փորձ ուրախալի եւ գովելի փաստ է՝ երիտասարդ հայագէտը հարկ է համարում այդ հարցում առկայ շատ ակնառու մի բացթողում ներկայացնել՝ հակադրելով Փարիզում գործող երկու կրթօջախներում հայերէնի դասաւանդման հարցում առկայ տարբեր մեթոդները՝ յընթացս մեկնաբանելով նաեւ ուսուցման որակին եւ նպատակներին առնչուող մի շարք նուրբ խնդիրներ: Նա գրում է.

«Պատրուական» Բազմավեպի ընթերցողք ուրախութեամբ կարդացին այն փոքրիկ նորալուրը, զոր գրեթէ բոլոր հայ թերթերն արտատպեցին, եւ որ կը յայտներ, թէ Պարիզի Բարձր Ռևմանց վարժարանին մէջ պր. Մէյէ սկսած է հայերէնի Զայնարանութեան դասեր աւանդել: Փոքրիկ ծառայութիւն մը մատուցանելու համար ընթերցողացս, ներկայիւս կը փափաքիմ՝ աւելի ընդարձակ տեղեկութիւն տալ ո՛չ միայն պր. Մէյէի եւ իր դասաւանդութեան, այլ եւ պր. Կարրիերի եւ առհա-

սարակ հայերէնի ուսման եւ ուսուցման եղանակին վրայ յԱրեւմուս: Թերևս այսու յուսախարութիւն պիտի առթեմ ընթերցողացս, սակայն չպիտի կարենայի լոել եւ նշմարտութիւնը քաքուցանել, պիտի խօսիմ՝ իբրեւ փորձառու եւ ականատես վկայ»<sup>1</sup>:

**Անձամբ մասնակցելով** այդ դասերին՝ **Աճառեանը հարկ է համարում ներկայացնել իր ստացած տպաւորութիւնը նմանատիպ դասընթացների արդիւնաւէտութեան մասին՝ քննելով ուսուցման եղանակներն ու մեթոդները:** Այդ առումով նա համեմատում է Փարիզում գործող հաստատութիւններից երկուսը՝ Սորբոնի Բարձր ուսմանց վարժարանը եւ Արեւելեան լեզուների վարժարանը:

**Սորբոնի Բարձր ուսմանց վարժարանում,** ուր հայերէնի դասընթաց էր վարում մեծ հայագէտ եւ հայասէր Անտուան Մէջէն, դասաւանդուում էր պատմութիւն եւ բանասիրութիւն, լեզուաբանութիւն եւ հին լեզուներ՝ յունարէն, լատիներէն, սանսկրիտ, հայերէն (գրաբար), պահլաւերէն, ասորերէն, ուսումնասիրութեան առարկայ էին նաեւ եղիպտական եւ ասորական բնւեռագրերը՝ նպատակ ունենալով ընդլայնելու ժԹ. դարավերջին մարդկային քաղաքակրթութեան պատմութեան հանդէպ եղած հետաքրքրութիւնների շրջանակը եւ գիտական հիմքերի վրայ զնելու եղած ուսումնասիրութիւնները: Այլ խօսքով՝ Բարձր ուսմանց վարժարանն այն միջավայրն էր, ուր միանդամայն տեղին ու պատճառաբանուած է հայերէնի կամ գրաբար հայերէնի ուսումնասիրութիւնը: Այդ առիթով Աճառեանն իր յարգանքի տուրքն է մատուցուն պրապուն մտքի տէր եւ պատախանատուութեան մեծ զգացումով մեր հին ու գեղեցիկ լեզուի դասաւանդումը ստանձնած գիտնականին՝ Անտուան Մէջէին: Նրա լսարանում հայերէն ուսումնասիրողների թիւը մեծ չէր, սակայն բարձրակարգ էր ուսուցման որակն ու լաւ մշակուած մեթոդը:

Քոլորովին այլ կարգի կրթօջախ էր Արեւելեան լեզուների վարժարանը, որ Փարիզում բացուել էր վաճառականութեան եւ դիւանագիտութեան շահերին ծառայելու նպատակամղումով: Արեւելեան լեզուների վարժարանում դասաւանդում էին այն երկրների լեզուները, որոնց հետ ֆրանսիան դիւանագիտական եւ առեւտրային յարաբերութիւններ ու շահեր ունի: Օրինակ, սաենք, արաբերէնը այդ վարժարանում ուսումնասիրում է խորութեամբ՝

1 ԱՃԱՌԵՍՆ, Հ., Հայոց լեզուի ուսուցման եղանակը յարեւմուս (ի Գաղղիա եւ ի Գերմանիա), Բագմալէպ, 1898, Յուլիս, 317:

Ներառելով ոչ միայն գրական արաբերէնը, այլ նաև Ալժիրի ժողովրդական խօսուն արաբերէնը, իսկ դա կարող էր նպաստել այդ երկրներում դիւանագիտական ծառայութիւն ստանձնած գործիչներին կամ առեւտրական գործակալներին թարգմանութիւններ մատուցելու հարցը կարգաւորելու գործին։ Նոյնը կարելի է ասել թուրքերէնի, ռուսերէնի, չինարէնի եւ այլ կենդանի լեզուների ուսուցման միանգամայն պարզ ու հասկանալի նպատակների մասին։ Այդ համատեքստում, սակայն, անհասկանալի եւ աննպատակ էր գրաբար հայերէնն այդ լեզուների շարքում ընդգրկելը, ինչի մասին իր տարակուսանքն է յայտնում Հ. Աճառեանը։

տարի վարժարանը կ'աւարտեն: Պատասխանս յուսահատական է: Բոլոր այն պարուները, որ կ'աշակերտին հայերէնի, պարզապէս դասալիքներ են. Գաղղիական կառավարութիւնը գինուորական ծառայութենէ ազատ կը կացուցանէ: բոլոր այն երիտասարդները, որ վարժարանի մը առաջին քննութեան յաջողած եւ օրինաւոր աշակերտաց կարգը դասուած են: Պարիզ կան բազմաթիւ համալսարանի, ինչպէս՝ բժշկական, իրաւագիտական, գեղարվեստական եւ այլն: Բայց ասոնց մուտքը դբժուար է, որովհետեւ կը պահանջուի մտից քննութիւն եւ մրցում, իսկ Արեւ. Լեզուաց վարժարանը չունի այսպիսի բան. մեր պարոն դասալիքներուն աւելի դիւրին է անշուշտ առանց քննութեան մտել այստեղ, մի տարի աշխատել, ամէն շանէ ի գործ դնելով քննութեան յաջողի եւ յաջորդ տարի բողոք հեռանալ վարժարանէն եւ միանգամայն գինուորական ծառայութենէ: Այնուհետեւ իր երազ կը մնան այն միամեայ դասերը, հայերէն բառերը, Խորենացին եւ այլն եւ այլն: Ահաւասիկ մեր փոքրիկ հայագէտները»<sup>2</sup>:

**Բնականաբար,** Հակառակ իր կամքի իրեն պարտադրուած առարկան մի կերպ դասաւանդող ուսուցչին չէր յաջողուում հայց լեզու սովորելու եւ իւրացնելու ցանկութիւն առաջացնել իրեն վստահուած լսարանում: Նրա դասից ստացած տպաւորութիւնն էլ բացասական էր, ի հարկէ: Առաջին բանը, որ դուր չի եկել Աճառեանին, տնային յանձնարարութիւնը ոչ թէ տեսրում, այլ փոքրիկ թղթակտորների վրայ ներկայացնելն էր: Այլ կերպ ասած՝ անլուրջ եւ անպատճիսանատու վերաբերմունք դասաւանդուող առարկայի հանդէպ: Զարմանալի չէ, որ թղթի կտորների վրայ գրուածը ամենաբարբարոս արտասանութեամբ կարդալուց յետոյ աշակերտները դասի աւարտին դրանք ուղղակի աղբամանն էին նետում: Այդպիսի անլուրջ վերաբերմունքի հետեւանքով ուսուցանուող առարկան չէր ընկալւում ու չէր մտապահուում: Զկար դասաւանդման եւ համակարգային ուսուցման որոշակի մեթոդ: Ուսուցիչն ինքն էլ չէր տիրապեսում լիզուին եւ յաճախ չէր կարողանում պատշաճ կերպով պատասխանել աշակերտների հարցերին: Այդ առիթով Աճառեանը ներկայացնում է մի ծիծաղելի դրուագ իր կատարած դասաւանդից: Այդ օրը բոլոր տրտնջում էին, թէ ոչ մի բառարանում չեն գտել առ դրան խորանին բառակապակցութեան մէջ առկայ դրան բառը: Ասում էին՝ բառարանում գտել են դրամ, բայց ոչ՝ դրան: Այդ բառն անծանօթ չը նաեւ ուսուցչին, եւ նա ճարահատեալ դի-

2 Անդ, 319:

մում է Աճառեանի օգնութեանը, որն էլ բացատրում է, թէ դա դուռն բառի սեռականն է եւ չը կարող դրան հոլովածեւով յայտնուել բառարանում։ Դասալումների ժամանակ նաեւ այլ կարգի վրիպումներ եղան։ Սեբէոսի պատմութեան փոքրիկ մի հատուծում էղած հանրայայտ տեղանուններն էլ անծանօթ էին ուսուցչին, եւ աշակերտների հարցերը մնում էին անպատճախան։ Նման անպատճախանատու վերաբերմունքը չը կարող չհիամթափեցնել եւ զայրացնել գիտելիքի մատուցման հարցում ուսուցչի դերը խիստ կարեւորող Աճառեանին։ Ուսուցչի անպատճախանատուութիւնն, անկասկած, փոխանցում էր աշակերտներին՝ ճեւաւորելով անտարբերութիւն եւ քամահրանք դասաւանդուող առարկայի հանդէպ։ Դա չը կարող չվիրաւորել իր կեանքի ուղին վաղ տարիքից հայերէնի ուսումնասիրութեան ոլորտում պատկերացնող եւ արդէն իսկ առաջին լուրջ քայլերն անող երիտասարդ հետազոտողին։ Սակայն նկատելի թերութիւններն ու բացայայտուած վրիպումները բոլորովին չին շփոթեցնում ինքնավստահ ուսուցչին։ Բայց ինչո՞ւ ինքնավստահ չլինէր, եթէ բժշկական համալարանի փարիզաբնակ մի հայ ուսանող կարդիերի մասին (հայերէնի իմացութեան առումով) ծիծագելի համեմատութիւն էր արել, թէ նա «գրաքար հայերէն կը գրէ եւ կը խօսի նիշտ այնպէս, ինչպէս Ս. Սահակ կամ Ս. Մեսրոպ»<sup>3</sup>։ Հայերէնի այդպիսի կիսագրագէտ ու անձարակ ուսուցչին հայ մեծերի հետ համեմատելը Աճառեանը համարում է քծնանք ու աղիտութիւն։ Իսկ ապագայ դիւնագէտներ եւ առեւտրական գործակալներ կրթող Արեւելեան լեզուների վարժարանում հին հայերէնի ոչ արդիւնակէտ դասաւանդումն առհասարակ է։ Աճառեանը համարում է աւելորդ ժամանակառութիւն այդ կրթօջախի ուսանողների համար, որոնց ինչպէս նշեցինք, նա համարում է զինուորական ծառայութիւնից խուսափող դասալիքներ։ Ուստի եւ հասկանալի էր մի քանի դասաւանդումների միջոցով դասընթացների էութեանն ու հետապնդալում մասնակների անդամագույն անդամագույն ժամանակարմար եւ անտեղի էր համարում գրաբարի ուսուցումը այդ կրթօջախում եւ դէմ էր այդ փաստը հայերիս համար ոգեւորիչ ու պատուաբեր իրողութիւն ներկայացնելու սնապարծ մեկնաբանութիւններին։

<sup>3</sup> Անդ։

**ԵՐԲ ԽՈՍՔԸ ՎԵՐԱԲԵՐՊՈԼՄ է ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆԻՆ, ԵՐԻՄԱՍԱՐԴ ՂԵ-  
ՊՈԼԱԲԵԱՆԸ ՆՐԱ ԱՄԵՆԱԲՐԱԿԱՆ, ԱՐԺԱՆԱՎԱյԵԼ ՄԵՂՄ ՀԱՄԱՐՊՈԼՄ է  
ԲԱՐՁՐ ՈՒՍՄԱՆց ՎԱՐԺԱՐԱՆԸ՝ «ՀԱՄԱՊԱՏԻՒ ԻՐ ՖՈՐ ԼԵԳՈՒՅԵՐԻՒ՝  
ԻՒԹ ՅՈՒՆԱՐԵՆԻ, ՍԱՆՍԿՐԻՒԹԻ, ԼԱՏԻՆԵՐԵՆԻ ԿՈՂՓԻՒՆ»<sup>4</sup>: ԻՍԿ Եթէ ՀԱՐԿ  
ԿԱՐ ԱՐԵԵԼՔԻ ԼԵԳՈՒՆԵՐԻ ՀԱՐԳՈԼՄ ՆԵՐՈԱՌԵԼ ՆԱԵԼ ՀԱՅԵՐԷՆԸ (ան-  
կախ դիւանագիտական յարաբերութիւններ չունենալու հանգա-  
մանքից), ապա դա, անշուշտ, պիտի լինէր ՀԱՅԵՐԷՆ աշխարհաբա-  
րը:**

**ՍՈՐԵՊՈՆԻ ԲԱՐՁՐ ՈՒՍՄԱՆց ՎԱՐԺԱՐԱՆՆՈԼՄ ԱՆՏՈՒԱՆ ՄԷՋԷՒԻ  
ԿՈՂՄԻԳ ՀԱՄՈՐԴԻՆ ՄՃԱԼԱԾ ՄԵԹՈՂՊՎ ԻՐԱԿԱՆԱԳՈԼՈՂ ԳՐԱԲԱՐ ՀԱ-  
ՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՄԱՍԻՆ ԽՈՍԿԵԼԻՍ Հ. ԱՃԱՌԵԱՆԸ պատշաճ  
ԿԵՐՊՈՎ ԳՆԱՀԱՄՈԼՄ ԵԼ ԳԴՎԱԲԱՆՆՈԼՄ է ԼԵԳՈՒՆԵՐԱՆԱԿԱՆ ՄՈՒՐԸ  
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՄԲ ՀՆՈՐՀԱԿԱԼ ԱՇԽԱՏՈԱՆՔ ԿԱՄԱՐՈՊ ԱՆ-  
ՏՈՒԱՆ ՄԷՋԷՒԻՆ՝ ՆՐԱՆ ՆԵՐԿԱՅԱԳՆԵԼՈՎ ՈՐԱՀԸ ԼԵԳՈՒՆԵՐԱՆՈԼԹԵԱՆԸ  
ԱՆՄԾՆԱԳՈՐԸ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵՍՆԱՄԵԿԱՅ ԵՐԻՄԱՍԱՐԴ ԼԵԳՈՒՆԵՐԱՆԻ՝  
«ԻՄՈՒՍ ԻՆԴԵԼԻՐՈՎԱԿԱՆ ԲՈԼՈՐ ՄԱՅՐ ԼԵԳՈՒԱՏ, ԵՒ ԱՅՍ ԽԱԼ ԵՎԱՏԱ-  
ԿԱ ՈՒՍԱԾ Է ԵԱԵԼ ՀԱՅԵՐԵՆԸ, զոր կատարելագործելու համար ան-  
ցած էր Կովկաս, ուր ժամանակ մը հայերէն խօսած է, տեսած է էջ-  
միածին, Աշոտարակ, բարձրացած է Արագած լեռը, ծանօթ է մեր  
աշխարհիկ գրական բարբառներուն եւ կը կարդայ հայերէն թերք եւ  
ուրիշ լեզուաբանական աշխատութիւններ»<sup>5</sup>:**

**ԲԱՐՁՐ ՈՒՍՄԱՆց ՎԱՐԺԱՐԱՆՆՈԼՄ ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑԻ յա-  
ճախող ուսանողները սակաւաթիւ էին, բայց, ինչպէս ԱՃԱՌԵԱՆՆ  
է նշում, դասալիքներ չէին: ՄԷՋԷՒՆ կարողանում էր խանդավա-  
ռել իր ուսանողներին մեր հին ու գեղեցիկ լեզուն ճանաչելու  
եւ սիրելու գաղափարով: Բնական է, որ նրա ուսանողներն էլ  
ձգտում էին ըստ ամենայնի իւրացնել լեզուն՝ յետագյում գի-  
տական հետազոտութիւններ իրականացնելու նպատակով: Այդ ա-  
ռեթով ԱՃԱՌԵԱՆԸ նշում է հայ ազգագրութեամբ զբաղուող  
Գալարէի անունը, որ մտադիր էր զբաղուել հայ ժողովրդական  
հէքիաթներով ու առածներով: ՄԷՋԷՒՆ դասաւանդման եղանակի  
ամենամեծ արժանիքներից մէկն էր բանավէճերի եւ քննարկում-  
ների հենքի վրայ խարսխուող գիտելիքների հաղորդումն էր:**

**ՀԱՅԵՐԷՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԵՐՈՍԻՉԵԱԼ ԵՐԿՈՒ ԿՐԹՕ-  
ՋԱԽԱՆՆԵՐՈՒՄ ՔՆՆԵԼՈՒԾ յետոյ ԱՃԱՌԵԱՆԸ ՀԱՐԿ է ՀԱՄԱՐՊՈԼՄ ՆԵՐ-  
ԿԱՅԱԳՆԵԼ ՆԱԵԼ ԼԵԶՈՒԱԲԱՆՈԼԹԵԱՆ դասական երկիր ՀԱՄԱՐՊՈԼՈՂ**

4 Ա.Յ.:

5 Ա.Յ., 320:

Գերմանիայում հայերէնի ուսումնասիրութեանն առնչուող խընդիրներ: Բանն այն է, որ Գերմանիայում եւս մասնագիտացում ընտրելիս հայերէնին այնքան կարեւորութիւն չի տրում, ինչքան դասական այլ լեզուներին: Ինչպէս նշում է Աճառեանը, այստեղ էլ ուսանողները նախընտրում են զբաղուել այն լեզուներով, որոնք ապագայում կը նպաստեն եկամտաբեր պաշտօն ապահովելուն: Այնուամենայնիւ, հնդեւրոպական լեզուների ուսումնասիրութեան հարցը շատ արդիական էր, եւ գիտական շրջանակներում կարեւորում էր նաև հայագիտութիւնը: Աճառեանն առանձնայատուկ ջերմութեամբ է խօսում Ստրասբուրգի համալսարանում հայերէն դասաւանդող մեծ գիտնական Հիւպշմանի մասին: Այս առիթով Աճառեանը տեղեկացնում է, որ «Բազմավիճակ» հանդէսի 1898ի Ապրիլ ամսուայ համարում ուսուցչապետ Մէյէն Հիւպշմանին նուիրուած քննադատական ընտիր յօդուած էր գրել՝ արժեւորելով այդ մեծ լեզուաբանին: Աճառեանը նոյնպէս հայերէնի համեմատական քերականութեան վեցամսեայ դասընթաց է անցել Հիւրշմանի լսարանում: Ընդամէնը երկու հայ ուսանող կար՝ մէկը Աճառեանն էր, միւսը՝ էջմիածնի վանքի միաբան եղնիկ վարդապետը:

Հիւպշմանը միշտ ցաւով է խօսել, որ հատուկենտ հայ ուսանողներ են գալիս համեմատական լեզուաբանութեան բնագաւառում մասնագիտանալու: Աճառեանը վկայակոչում է այդ առիթով Հիւպշմանի՝ սրտի ցաւով ասուած խօսքերը մասնագիտների պակասի մասին: Մեծ լեզուաբանը գտնում էր, որ հայագիտութեան բնագաւառը պիտի զարգացնեն հայերը՝ մասնագիտանալով լեզուաբանութեան բնագաւառում: «Երրոպացիները իրենց չափու եւ կարողութեամբ կաշխատին հայերէնի ուսումը հետզիետ յառաջցնելու եւ անոր դժուարին խնդիրները լուծելու համար. Լայն է շացնելու եւ անոր դժուարին խնդիրները լուծելու համար. Լայն է այս դաշտը եւ ցարդ գրեթէ բոլորովին անմշակ. գիտունին իւրաքանչիւր քայլին կը բացուի աշխատութեան ընդարձակ նիւթ. ընելիք շատ բան կայ, որոնց մենք՝ երրոպացիներս, անկարող ենք: Հայերը պիտի աշխատին, եւ սակայն Հայոց մէջ եւս որչափ ցանցառ է լեզուաբանութեամբ զբաղողներու թիւը»<sup>6</sup>:

ԶԵՄՄԱ. ԲԱՌՆԱՍ.ՍԵԱՆ

### Summary

## A REFERENCE TO ARMENIAN LANGUAGE TEACHING PROBLEMS ON THE PAGES OF THE PERIODICAL “BAZMAVEP”

JEMMA BARNASYAN

In the edition of July 1898 of the journal “Bazmavep”, the young scientist H. Ajarian refers to those educational institutions in France and Germany, which taught also Armenian language. Personally participating in the Armenian lessons, Ajarian believes it is necessary to present his impressions of the effectiveness of such courses by examining the purpose and methods of teaching. In this regard, he compares two of the Parisian institutions – first, College of Sorbonne where Antoine Meillet, the well-known armenologist and greatest amateur of Armenian people, was giving Armenian lessons, and second, the Special School of Oriental Languages where the Armenian language was just formally taught by someone named Carriere with a very poor knowledge of Armenian. Visiting that special school and observing his lessons, Ajarian found a great number of mistakes. After examining the problems of Armenian language teaching in the aforementioned institutions, Ajarian finds it necessary to present also the problems of teaching Armenian language in Germany as a classical country of language study, thus paying tribute to the great scientist Heinrich Hübschmann who was teaching Armenian in the University of Strasbourg.